Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի N 2339 - Լ որոշման

# Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ

## ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ ՀԵՏՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն միջոցառման իրականացման հիմնական նպատակն է նպաստել կենսաթոշակառուների գնողունակության բարձրացմանը՝ հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելիս:

2. Միջոցառման իրականացումը նպատակ ունի նաև խթանելու անկանխիկ եղանակով գործարքների կատարումը Հայաստանի Հանրապետությունում, ավելացնելու սպառողների, մասնավորապես, կենսաթոշակառուների և սոցիալական խոցելի խմբերի կողմից ֆինանսական ժամանակակից գործիքների և տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքները, մեծացնելու նշված գործիքների կիրառելիության տարածվածությունը:

3. Սույն միջոցառման մեջ կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1) կենսաթոշակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշման 3-րդ կետում նշված գումար՝ սոցիալական պաշտպանության (ապահովության) ծրագրերով նախատեսված կենսաթոշակներ, պարբերական բնույթ կրող (որոշակի կամ անորոշ ժամկետով տրվող) նպաստներ և դրամական այլ վճարներ, որոնք վճարվում են կենսաթոշակի համար սահմանված կարգով.

2) ծառայություն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն.

3) բանկ՝ ծառայության հետ սոցիալական ապահովության հաշվի պայմանագիր կնքած բանկ, որի միջոցով վճարվում է կենսաթոշակ.

4) բանկային հաշիվ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով բանկում բացված սոցիալական ապահովության հաշիվ, որով վճարվում է կենսաթոշակ.

5) կենսաթոշակառու (նաև շահառու)՝ անձ, որի անվամբ բացվել է կենսաթոշակառուի բանկային հաշիվը (որին նշանակվել է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված կենսաթոշակ, կամ անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչ՝ ծնող, որդեգրող, խնամակալ).

6) ՊՈՍ-տերմինալ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքով սահմանված կարգով գործող մանրածախ առևտուր իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող սուբյեկտի մոտ տեղադրված՝ վճարային քարտերով վճարումներ ընդունող (ավտոմատ գանձող) սարք.

7) հետվճար՝ հաշվետու ժամանակահատվածում (տվյալ ամսում) կենսաթոշակառուի կողմից կենսաթոշակային քարտի միջոցով ապրանքների և (կամ) ծառայությունների ձեռքբերման դիմաց ՊՈՍ-տերմինալներով կատարված անկանխիկ վճարումներից, ինչպես նաև կենսաթոշակային քարտը թողարկած բանկի բանկոմատներում և նույն բանկի էլեկտրոնային հավելվածի միջոցով կոմունալ ծառայությունների (գազի, էլեկտրաէներգիայի, խմելու ջրի, ֆիքսված և բջջային հեռախոսի մատակարարման ծառայություններ) դիմաց կատարված վճարումներից հաշվարկվող գումար:

4. Սույն միջոցառման շահառուներին հետվճարը վճարվում է յուրաքանչյուր ամիս: Տվյալ ամսում վճարման ենթակա հետվճարը հաշվարկվում է այդ ամսվան նախորդող ամսում կատարած անկանխիկ գնումների և վճարումների գործարքների 10%-ի չափով:

5. Կենսաթոշակառուին վճարվող հետվճարը չի կարող գերազանցել 5000 դրամը:

6. Տվյալ ամսում կենսաթոշակառուին միաժամանակ մեկից ավելի բանկով կենսաթոշակի տարբեր տեսակներ վճարելու դեպքում 5000 դրամը կիրառվում է այդ ամսում բոլոր բանկերով կատարած գործարքների՝ սույն միջոցառման 4-րդ կետի համաձայն հաշվարկված հետվճարների հանրագումարի նկատմամբ և փոխանցվում է այն բանկային հաշվին, որով կատարված անկանխիկ գնումների և վճարումների գործարքներից հաշվարկված հետվճարի գումարն առավելագույնն է:

7. Հետվճարի ամբողջ գումարը վճարվում է պետական բյուջեի միջոցներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ